



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 25Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ կետը և ղեկավարվելով 64-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին հատկացնել 14 189 410 (տասնչորս միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ, որից՝

1. Փաստացի մատուցված թարգմանչական ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու նպատակով՝ 4 189 410 (չորս միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական ծառայություններ» 423100 հոդվածով:

2. Փոստային առաքման ծառայությունների տարեկան անբավարարությունն ապահովելու նպատակով «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերով նախատեսված գումարներն ավելացնելու նպատակով՝ 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապի ծառայություններ» 421400 հոդվածով:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

2017թ. նոյեմբերի 16
ք. Երևան

Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆ